ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹԻ ՀԱՏՈՒԿ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Սույն պայմաններով (այսուհետ՝ Պայմաններ) կարգավորում են ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված սոցիալական փաթեթի հատկացման կարգի (այսուհետ՝ Կարգ) հիման վրա «Արդշինբանկ» ՓԲԸ-ի և սոցիալական փաթեթի հաշվի դիմում-պայմանագիր (այսուհետ նաև՝ Դիմում-պայմանագիր) ստորագրած ֆիզիկական անձանց միջև ֆիզիկական անձի սոցիալական փաթեթի հատուկ հաշվի (այսուհետ՝ Հաշիվ) դիմում-պայմանագրից բխող հարաբերությունները: Ընդ որում, Պայմաններով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Որոշմամբ և ՀՀ օրենսդրությամբ:

2. Պայմաններում հետևյալ հասկացությունները կիրառվում են ստորև նշված իմաստով.

1) ***«Բանկ»***՝ «Արդշինբանկ» ՓԲԸ,

2) ***«լիազոր մարմին»***՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,

3) ***«սոցիալական փաթեթ»***՝ սոցիալական փաթեթի շահառուների և (կամ) նրանց ընտանիքների անմիջական անդամների առողջական, կրթական և այլ խնդիրների ապահովման կամ ընտրական միջոցառումների համախումբ՝ աշխատողների մոտիվացման և աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով,

4) ***«սոցիալական փաթեթի շահառու»***՝ Կարգի 2-րդ կետի 4-րդ և 5-րդ կետերում նշված հաստատությունների հաստիքացուցակով նախատեսված հաստիք զբաղեցնող անձինք, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի աշխատակազմի, Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի, Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամի», «Արմենպրես» լրատվական գործակալության հաստիքացուցակով նախատեսված հաստիք զբաղեցնող անձինք, Կարգի 2-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերում նշված հաստատություններում չաշխատող Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող «ԽՍՀՄ» և Հայաստանի Հանրապետության «ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ» պատվավոր կոչմանն արժանացած անձինք, Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտենի հաստիքացուցակով նախատեսված հաստիք զբաղեցնող աշխատողներ՝ բացառությամբ ղեկավար աշխատակազմի (տնօրենի, տնօրենի տեղակալների), ինչպես նաև «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 12-ի N 12-Ն որոշմամբ սահմանված առանձնապես ծանր, առանձնապես վնասակար պայմաններ ունեցող պաշտոններ զբաղեցնող անձինք, բացառությամբ Որոշման 9-րդ կետով նախատեսված անձանցից, ինչպես նաև Որոշմամբ սահմանված(ող) այլ հիմնարկների և կազմակերպությունների աշխատակիցներին,

5) ***«սոցիալական փաթեթի գումար (սահմանաչափ)»***՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ընդհանուր հատկացումների ներքո մեկ դրույքի (նորմալ աշխատաժամանակի) համար Որոշմամբ սահմանված սոցիալական փաթեթի ամսական գումարի չափ, որը կազմում է 6 հազար ՀՀ դրամ,

6) ***«Հաճախորդ»***՝ Բանկ դիմած և սոցիալական փաթեթի հաշվի դիմում-պայմանագիր ստորագրած սոցիալական փաթեթի շահառու,

7) ***«Հաճախորդի ընտանիքի անմիջական անդամ»***՝ Հաճախորդի ամուսինը, ծնողը, զավակը (նաև որդեգրողը, որդեգրվածը), խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը), տատը, պապը, թոռը, համատեղ բնակվող՝ եղբայրը, քույրը,

8) ***առողջապահական փաթեթ***՝ սոցիալական փաթեթի բաղադրամաս, որի նպատակը սոցիալական փաթեթի շահառուի բժշկական օգնության և սպասարկման կազմակերպումն ու ֆինանսավորումն է, որի համար տվյալ բյուջետային տարում նախատեսված ընդհանուր գումարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ուղղակիորեն տրամադրվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը,

9) ***պարտադիր կանխարգելիչ բժշկական քննություն***՝ սոցիալական փաթեթի բաղադրամաս, որի շրջանակներում տրամադրվող ծառայությունների ցանկը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 375-Ն որոշմամբ,

10) ***«սոցիալական փաթեթի ծառայություններ»***՝

ա. հանգստի ապահովում՝ Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում, որից կարող են օգտվել Հաճախորդը և Հաճախորդի ընտանիքի անմիջական անդամ(ներ)ը,

բ. հիփոթեքային վարկի ամսական վճարի մարում, որից կարող են օգտվել Հաճախորդը և Հաճախորդի ընտանիքի անմիջական անդամ(ներ)ը,

գ. ուսման վճար, որից կարող են օգտվել Հաճախորդը և Հաճախորդի ընտանիքի անմիջական անդամ(ներ)ը,

դ. Հաճախորդի առողջության ապահովագրության լրացուցիչ ծառայությունների նվազագույն փաթեթի և (կամ) Հաճախորդի ընտանիքի անդամ(ներ)ի առողջության ապահովագրության նվազագույն բազային փաթեթի ձեռքբերում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշման N 2 հավելվածի N 1 ձևով նախատեսված չափորոշիչներին համապատասխան,

ե. փոխանցումներ հօգուտ Հայաստանի կամ Արցախի Հանրապետությունների լիազոր պետական մարմինների հատուկ հաշիվների կամ հիմնադրամների՝ ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ համապատասխան հիմնադրամը նախատեսված լինելու դեպքում, ընդ որում հիմնադրամին սոցփաթեթի գումարները փոխանցելու համար վճարման հանձնարարագիր կարող է տրվել շահառուի՝ մինչև 2021 թվականի համար, ներառյալ՝ հոկտեմբեր ամսվա սոցփաթեթի գումարներից փոխանցումների սահմաններում,

զ. առողջապահական փաթեթի մեջ չներառված լրացուցիչ ծառայություններից (*ախտորոշիչ հետազոտությունների և ստոմատոլոգիական ծառայություններ*) օգտվելու վճարի մարում, որից կարող է օգտվել Հաճախորդը՝ սոցփաթեթի շահառուն, ընդ որում սույն կետով սահմանված ծառայություններից չեն օգտվում զինծառայողները և նրանց հավասարեցված անձինք, ինչպես նաև փրկարար ծառայության ծառայողները,

է. մարզա-առողջարարական և սպորտային համալիրների, լողավազանների և այլ սպորտային կազմակերպությունների ծառայություններից օգտվելու վճարի մարում, որից կարող է օգտվել սոցփաթեթի շահառուն կամ նրա ընտանիքի անմիջական անդամը (անդամները),

ը. պետական սուբսիդավորմամբ ուսանողական վարկի ամսական վճարի մարում, որից կարող է օգտվել սոցփաթեթի շահառուն կամ նրա ընտանիքի անմիջական անդամը (անդամները):

11) ***«սոցիալական փաթեթի ծառայություններից օգտվելու համար ներկայացվող անձը հաստատող փաստաթուղթ»***՝ ՀՀ քաղաքացիների համար՝ անձնագիրը, նույնականացման քարտը, զինվորական գրքույկը, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթը, մինչև 16 տարեկան երեխաների համար՝ նաև ծննդյան վկայականը, ապաստան հայցողների համար՝ ապաստան հայցողի անձը հաստատող վկայականը, փախստականների համար՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար՝ օտարերկրյա պետության անձնագիրը, անձը (ինքնությունը) հաստատող միջազգայնորեն ճանաչված փաստաթղթերը, ՀՀ հատուկ անձնագիրը, կացության քարտը:

3. Պայմաններում այլ հասկացությունները կիրառվում են Որոշմամբ սահմանված իմաստով:

4. Բանկը պարտավորվում է Հաճախորդի համար բացել սոցիալական փաթեթի հաշիվ՝ համապատասխան փաստաթղթերը (անձը հաստատող փաստաթուղթ, իսկ ՀՀ քաղաքացիների, Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացիների, Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձանց, փախստականների համար՝ նաև տեղեկանքի տեսքով հատկացված հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք, բացառությամբ, եթե նրանց կողմից ներկայացվել է սոցիալական ապահովության քարտ կամ նրանց կողմից ներկայացված անձը հաստատող փաստաթղթում ամրագրված է հանրային ծառայությունների համարանիշը Բանկ ներկայացնելու օրվանից սկսած մեկ բանկային օրվա ընթացքում:

5. Սոցփաթեթի հաշիվը կարող է տնօրինել Հաճախորդը կամ Հաճախորդի կողմից լիազորված անձը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նոտարի կողմից վավերացված կամ Բանկի կողմից սահմանված կարգով Բանկի տարածքում տրված լիազորագրի հիման:

6. Հաճախորդը պատասխանատվություն է կրում Դիմում-պայմանագրում լրացված տեղեկությունների ամբողջական, հավաստի և իրականությանը համապատասխան լինելու համար ու պարտավորվում է ներկայացված տեղեկատվության յուրաքանչյուր փոփոխության դեպքում ողջամիտ ժամկետում տեղեկացնել Բանկին:

7. Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը առ այն, որ Բանկն իրավունք ունի Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել համապատասխան վարկային բյուրոյին կամ վարկային ռեգիստրին՝ վարկային պատմությունը պարզելու նպատակով:

8. Սոցիալական փաթեթի շահառուների համար (բացառությամբ զինծառայողների, քրեակատարողական ծառայողների, փրկարար ծառայության ծառայողների) սոցիալական փաթեթի ծառայություններից օգտվելու պարտադիր նախապայման է կանխարգելիչ բժշկական քննության բաղադրիչից օգտվելը: Այդ թվում 2017 թվականի հունվարի 1-ից սկսած պարտադիր կանխարգելիչ բժշկական քննություն անցնելն ակտիվացնում է սոցիալական փաթեթի՝ Որոշմամբ նախատեսված ծառայությունները և (կամ) սոցփաթեթի հաշվում առկա դրամական միջոցները կանխիկացնելու իրավունքը կանխարգելիչ բժշկական քննությունն անցնելու վերաբերյալ տեղեկանքն ստանալու օրվանից մինչև մեկ տարի (365 օր) ժամկետով: Ընդ որում, սույն կետով նախատեսված սահմանափակումը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ շահառուն տվյալ տարում արդեն օգտվել է սոցիալական փաթեթի ծառայություններից և ունի ձևավորված պարտավորություն: Սույն կետի դրույթները չեն տարածվում այն անձանց վրա, ովքեր աշխատանքից ազատվել են և սոցփաթեթի հաշվի միջոցներն օգտագործելու պահին չեն հանդիսանում սոցփաթեթի շահառու կամ Որոշմամբ նախատեսված որևէ հիմքով դադարեցվել է նրանց սոցփաթեթից օգտվելու իրավունքը և այդ պատճառով չեն անցել պարտադիր կանխարգելիչ բժշկական քննություն: Սույն կետում նշված նախապայմանը և սահմանափակումը չեն տարածվում նաև ՀՀ կառավարության որոշմամբ նախատեսված համապատասխան Հիմնադրամին(ներին) կատարվող փոխանցումների վրա: Նշված ծառայություններից օգտվելու կամ միջոցները կանխիկացնելու հնարավորությունն ակտիվանում է այն պահից, երբ էլեկտրոնային տվյալների շտեմարանում արձանագրվում է շահառուի բժշկական քննություն անցնելու փաստը:

9. Հաճախորդը (բացառությամբ զինծառայողների, քրեակատարողական ծառայողների, փրկարար ծառայության ծառայողների) Որոշմամբ նախատեսված առողջապահական փաթեթի պարտադիր կանխարգելիչ բժշկական քննության բաղադրիչից օգտվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից սահմանված կարգով: Առողջապահական փաթեթի պարտադիր կանխարգելիչ բժշկական քննություն իրականացրած համապատասխան կազմակերպությունը Հաճախորդին տրամադրում է Հայաստանի Հանրապե-

տության առողջապահության նախարարի կողմից հաստատված ձևի տեղեկանք՝ երկու օրինակից, որից մեկ օրինակը շահառուն ներկայացնում է Բանկին:

10. Դիմում-պայմանագրում նշված եղանակով (էլեկտրոնային, առձեռն և այլն) Բանկը անվճար Հաճախորդին տրամադրում է իր հաշվին մուտքագրված և ելքագրված գումարների մասին տեղեկատվություն (այսուհետ՝ քաղվածք)՝ առնվազն երեսնօրյա պարբերականությամբ, եթե հաշվետու ժամանակահատվածում սոցիալական փաթեթի հաշիվը դեբետագրվել (և) կամ կրեդիտագրվել է: Սույն կետով չնախատեսված այլ դեպքերում Հաճախորդի պահանջով քաղվածք տրամադրվում է Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և պայմաններով:

11. Բանկը կարող է Հաճախորդի գործատուի կողմից տրված գրավոր դիմումի հիման վրա գործատուի կողմից սխալ փոխանցված գումարը անակցեպտ կարգով հետ փոխանցել գործատուի գանձապետական հաշվին, եթե տվյալ գումարի չափով պարտավորություններ չեն ձևավորվել: Ընդ որում, եթե գումարը փոխանցվել է գործատուի բանկային հաշվից(ոչ գանձապետական հաշվից), կամ այլ ուղարկողի կողմից, ապա գումարի վերադարձման համար անհրաժեշտ է նաև Հաճախորդի գրավոր համաձայնությունը:

12. Սոցփաթեթի հաշվից փոխանցում կատարելու համար Հաճախորդը (նրա կողմից սույն Պայմաններով սահմանված կարգով լիազորված անձը) Բանկին պետք է ներկայացնի Բանկի կողմից սահմանված ձևի վճարման հանձնարարական, որին որպես հիմք պետք է կցվեն սոցփաթեթի հաշվից փոխանցման համար հիմք հանդիսացող Որոշմամբ նախատեսված սոցփաթեթի ծառայությունների ձեռքբերումը հավաստող համապատասխան փաստաթուղթը (փաստաթղթերը):

Սոցփաթեթի հաշվից Բանկի կողմից փոխանցումներն իրականացվում են Հաճախորդի (նրա կողմից սույն Պայմաններով սահմանված կարգով լիազորված անձի) կողմից Բանկին ներկայացված վճարման հանձնարարականում նշված կարգով և ժամկետներում:

Այն դեպքում, երբ Հաճախորդի կողմից ներկայացվել է Սոցիալական փաթեթի հաշվից պարբերական վճարման հանձնարարական և վճարման օրը Հաճախորդի հաշվին առկա միջոցները չեն բավականացնում փոխանցումն իրականացնելու համար և (կամ) ավարտվել է կանխարգելիչ բժշկական քննությունն անցնելու վերաբերյալ տեղեկանքի Կարգով նախատեսված ժամկետը, ապա հանձնարարականով նախատեսված կոնկրետ այդ փոխանցումը չիրականացնելու համար Բանկը պատասխանատվություն չի կրում, սակայն իրավունք է ձեռք բերում հանձնարարականով սահմանված վճարումը կատարելու համար, կանխարգելիչ բժշկական քննությունն անցնելու վերաբերյալ տեղեկանքի ուժի մեջ գտնվելու ժամկետներում, հաշվեհամարին ուշ փոխանցված գումարներն անակցեպտ կարգով՝ առանց լրացուցիչ հանձնարարականի, գանձել Հաճախորդի Սոցփաթեթի հաշվից և փոխանցել ներկայացված պարբերական վճարման հանձնարարականում նշված անձին՝ սոցիալական փաթեթի ծառայություն մատուցողին: Ընդ որում, Բանկը պարբերական վճարման հանձնարարականը ընդունում և կատարում է ընթացիկ բյուջետային տարում տվյալ սոցիալական փաթեթի հաշվին Հաճախորդի գործատուի(սոցփաթեթի փոխանցման համար պատասխանատու կազմակերպության) կողմից փոխանցված գումարի առաջին մուտքից հետո, այդ թվում սոցփաթեթի որևէ ծառայությունից օգտվելու համար Հաճախորդի կողմից վճարման հանձնարարական կարող է ներկայացվել մինչև տվյալ բյուջետային տարվա ավարտն ընկած ժամանակահատվածի ամիսների համար՝ տվյալ ամսիների համար ստացվող գումարների հաշվարկի չափով:

13. Հանգստի ապահովման ծառայությունից օգտվելու դեպքում Հաճախորդը Որոշմամբ սահմանված փոխանցման համար հիմք հանդիսացող փաստաթուղթը (իսկ Հաճախորդի ընտանիքի անմիջական անդամի՝ սոցիալական փաթեթի ծառայություններից օգտվելու դեպքում՝ նաև Որոշմամբ

սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը) Բանկ է ներկայացնում մինչև այդ ծառայությունից օգտվելը կամ ոչ ուշ, քան այդ ծառայությունից օգտվելուց հետո 15 օրվա ընթացքում:

14. Բանկը կարող է Որոշմամբ սահմանված կարգով Հաշվի պարտավորությունների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրել սոցիալական փաթեթի շահառուի գործատուին:

15. Բանկը կարող է սոցփաթեթի հաշվի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրել լիազոր մարմնին:

16. Բանկը երաշխավորում է Հաշվի, Հաշվով գործառնությունների և Հաճախորդի մասին տեղեկությունների գաղտնիությունը և նման տեղեկություններ տրամադրումը միայն Հաճախորդին, նրա լիազոր ներկայացուցչին և սույն Պայմանների **13** և **14** կետերով սահմանված սոցիալական փաթեթի շահառուի գործատուին և լիազոր մարմնին: Երրորդ անձին, այդ թվում՝ պետական մարմիններին (բացառությամբ լիազոր մարմնի) և դրանց պաշտոնատար անձանց նման տեղեկությունները տրամադրվում են բացառապես օրենքով նախատեսված դեպքերում:

17. Հաճախորդը կարող է փակել սոցփաթեթի հաշիվը և դրական մնացորդի առկայության դեպքում՝ տեղափոխել սոցփաթեթի միջոցները այլ բանկում բացված սոցփաթեթի հաշվին միայն նոր բյուջետային տարում՝ նախքան սոցիալական փաթեթի ընթացիկ տարվա առաջին գումարի փոխանցումը:

18. Պայմաններով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը:

19. Պայմանները կարող են պարբերաբար Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել, որոնք Բանկի հետ մինչև փոփոխված Պայմանների հրապարակումը Դիմում-պայմանագիր կնքած Հաճախորդների համար ուժի մեջ են մտնում դրանց հրապարակման ամսաթվին հաջորդող 7-րդ աշխատանքային օրը, իսկ նոր հաճախորդների համար՝ հրապարակման պահից, եթե Բանկի կողմից փոփոխություններն ուժի մեջ մտնելու առավել ուշ ժամկետներ չեն սահմանվում: Ընդ որում՝ հրապարակման ամսաթիվ է համարվում Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում դրանց տեղադրման ամսաթիվը: Սույն կետի և Դիմում-պայմանագրի միջև հակասություններ առաջանալու դեպքում գործում են սույն կետի դրույթները:

Կատարված փոփոխություններն ու լրացումները Բանկն իր հայեցողությամբ հրապարակում է տեղեկատվության այնպիսի միջոցներով, որոնք հնարավորություն են տալիս ծանոթանալու այդ տեղեկություններին: Ըստ այդմ էլ՝ Բանկը փոփոխությունների ու լրացումների վերաբերելի տեղեկությունները հրապարակում է՝

- Բանկի ինտերնետային կայքէջում, և(կամ)
- Բանկի մասնաճյուղերում և Հաճախորդների սպասարկում իրականացնող այլ ստորաբաժանումներում առկա տեղեկատվական վահանակներում հայտարարությունների տեղադրման միջոցով, և(կամ)
- Հաճախորդների էլեկտրոնային փոստային հասցեներով ուղարկելու միջոցով. և(կամ)

- այլ միջոցներով, որոնք հնարավորություն են տալիս Հաճախորդին ստանալու և հավաստիանալու, որ տվյալ տեղեկությունները ստացել է Բանկից:

Բանկն իր բացառիկ հայեցողությամբ տեղեկությունները հրապարակում է վերոհիշյալ միջոցներից որևէ մեկով կամ մի քանիսով: